ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

1 դեկտեմբերի 2025թ. թիվ 1395

Ա.ԵՐԻՑՅԱՆԻՆ ԵՎ Է.ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ
ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունները կատարող Մ.Նահապետյանի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի ոլորտում ՀՀ Լոռու մարզի զարգացման ռազմավարության հիման վրա իրականացվող գործառնական ծրագրերի, մարզային ենթակայության ուսումնական հաստատությունների միջնաժամկետ ծախսային ծրագրերի կազմման, միջազգային համագործակցային ծրագրերին մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների ներառման աշխատանքների համակարգող Արմինե Երիցյանին և վարորդ Էմմանուել Ավետիսյանին ս/թ դեկտեմբերի 2-ին մեկ օրով գործուղել ք. Երևան՝ ուսումնական հաստատությունների տնօրենների թափուր հաստիքների համար հայտարարված մրցույթների հարցազրույցի փուլերին՝ որպես հանձնաժողովի անդամ մասնակցելու համար:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը՝ բացառությամբ ճանապարհածախսի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Recoverable Signature

X

ՄԵՐԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Signed by: DALLAKYAN MERI 5303860493

Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 1
ք.Վանաձոր